ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ««Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների կատարման համար կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի ապրիլի 15-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրում 2022 թվականի մարտի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 7.5 և 7.7 կետեր:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

15.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 գնման պայմանագրի

ք. Երևան 24 · 03.2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ճանապարհ» ՍՊԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Է. Բեզոյանի և «Արցախճան» ՍՊԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Ռ. Սողոյանի, (այսուհետ՝ երկուսը միասին Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 29.03.2021թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 15.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.7 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի 5.3 կետում <<350>> թիվը փոխարինել <<380>> թվով:

բ) Պայմանագրի N 1 հավելվածում 3-րդ փուլի <<130>> թիվը փոխարինել <<160>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից և կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ճանապարհ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 60
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651

Գլխավոր տնօրեն՝

_____ Է. Բեզոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Արցախճան» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472303749820000
ՀՎՀՀ 00915384

Գործադիր տնօրեն՝

_____ Ռ. Սողոյան